ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՉԻՖԼԻԿՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ԵՐՎԱՆԴԻ

ՊԱՏՎԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԲԱՎԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք՝ քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ЧИФЛИКЯН АРМЕНУИ ЕРВАНДОВНА

ГРАЖДАНСКО-ПРАВОВАЯ ЗАЩИТА ЧЕСТИ, ДОСТОИНСТВА И ДЕЛОВОЙ РЕПУТАЦИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – “Частное право – гражданское, торговое (коммерческое); международное частное, семейное, трудовое право, право социального обеспечения”

ЕРЕВАН - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Տ. Կ. Բարսեղյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Դ. Ավետիսյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լ. Ռ. Մելիքջանյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հուլիսի 2-ին, ժամը 11^{00}-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի Պետական Համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018 թվականի մայիսի 31-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юрид. наук, профессор Т. К. Барсегян

Официальные оппоненты: доктор юрид. наук, профессор В. Д. Аветисян

кандидат юрид. наук, доцент Л. Р. Меликджанян

Ведущая организация: Российско-Армянский университет

Защита диссертации состоится 2-ого июля 2018 г. в 11^{00} часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 31-ого мая 2018 г.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент А. А. Манасян

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պատշաճ պաշտպանության անհրաժեշտությունը կասկածից վեր է: Այն հետապնդում է ոչ միայն անձի իրավունքները համապատասխան ոտնձգություններից անխախտ պահելու նպատակ, այլև ակնհայտորեն նպաստում հասարակության անդամների՝ միմյանց միջև վարվելակերպի կանոնների ամրապնդմանն ու կատարելագործմանը: Խոսելով այդ կանոնների հասարակական կարևորության մասին՝ պետք է ընդգծել, որ դրանք նպաստում են ինչպես ավելի քաղաքավարի, այնպես էլ այնպիսի հասարակության կայացմանը, որը հիմնվում է ճշմարիտ փաստերի վրա: «Արժանապատվություն» և «հեղինակություն» կատեգորիաներն անձի համար միշտ եղել են առանձնահատուկ հոգածության առարկա: Մարդն իր գոյության առաջին իսկ ժամանակից անասելի ջանքեր է գործադրել իր հեղինակությունը բարձր պահելու համար՝ ընդհուպ մինչև չխնայելով սեփական կյանքը: Անշուշտ, անձի անվան «բարի» լինելը քաղաքացիական իրավունքի յուրաքանչյուր սուբյեկտ յուրովի է մեկնաբանում՝ իր ուրույն նշանակությունը տալով դրան: Բայց այն, որ իրենց անունը «բարի» պահել ձգտում են գրեթե բոլորը, կասկած չի հարուցում:

2010 թվականի մայիսի 18-ին կատարված լայնամասշտաբ օրենսդրական փոփոխությունները նշանավորվեցին զրպարտության և վիրավորանքի ապաքրեականացմամբ, որպիսի հանգամանքը պայմանավորեց զրպարտության և վիրավորանքի ուսումնասիրման անհրաժեշտությունն արդեն քաղաքացիական իրավունքի հարթությունում: Բացի այդ խիստ արդիական է դարձել, հատկապես 2014 թվականի մայիսի 19-ի օրենսդրական փոփոխություններից հետո, բարոյական վնասի փոխհատուցման հարցի պարզաբանումը՝ հաշվի առնելով բարոյական վնասի գումարային ձևով հատուցման վերաբերյալ հակադիր մոտեցումները խորհրդային ժամանակաշրջանում և ներկայում: Տարիներ ի վեր հանդիպելով իր՝ որպես խորհրդային հասարակությանն անհարիր երևույթի հանդեպ մերժողական դիրքի՝ բարոյական վնասն արդի պայմաններում անցնում է նոր իմաստավորման միջով, որի ընթացքում դրա առնչությամբ ծագող հարաբերությունները պետք է կարգավորվեն՝ որպես ուղենիշ ունենալով ոչ միայն բարոյական վնասի ինստիտուտի հետ վաղուց հարազատացած երկրների փորձը, այլև մեր հասարակության պատկերացումներն ու պահանջները դրա նկատմամբ:

Այսպիսով՝ ընտրված թեմայի արդիականության մասին են վկայում Հայաստանի Հանրապետությունում աճող դատական գործերի քանակը

անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության կապակցությամբ, ինչը հավելյալ ցուցիչ է նշված ոչ նյութական բարիքների կապակցությամբ առաջացող հարաբերությունների իրավական կարգավորման արդիականությունն ընդգծելու համար:

Մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից բազմիցս ընդգծվել է խոսքի ազատության կենսական դերը՝ որպես պետության և հասարակության բնականոն կենսագործունեության և կայուն զարգացման նախապայման: Այդ հիմնարար ազատությունն իր ամրագրումն է ստացել նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 19-րդ հոդվածում: Հետաքրքրական է, որ այս առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը ևս անմասն չի մնացել, քանի որ այն նույնպես, թեև անուղղակիորեն, բայց առնչվում է խոսքի ազատությանը՝ սահմանելով անձի արժանապատվության, պատվի և գործարար համբավի պաշտպանության հնարավորություն: Ուստի ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առաջնահերթ է խոսքի ազատության և հեղինակության իրավունքի միջև սահմանների որոշումը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Թեմայի շրջանակներում հետազոտության օբյեկտ են պատվի, արժանապատվության և գործարար համբավի իրավունքների պաշտպանության կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները, իսկ առարկան՝ դրանց խախտման կապակցությամբ ծագող հարաբերությունները կարգավորող իրավանորմերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը պատվի, արժանապատվության և գործարար համբավի կապակցությամբ առաջացող հարաբերությունների էության բացահայտումն է և տվյալ ոլորտում առկա խնդիրների հաղթահարումը: Վերոգրյալ նպատակից ելնելով՝ սույն աշխատությամբ դրվել են հետևյալ խնդիրները՝

- բացահայտել պատվի, արժանապատվության և գործարար համբավի էությունը՝ որպես արժեքներ, իրավական կատեգորիաներ, քաղաքացիական իրավունքի օբյեկտներ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի կարգավորման առարկաներ,
- ուսումնասիրել զրպարտության՝ որպես անձանց արժանապատվությունը, պատիվն ու գործարար համբավն արատավորող իրավախախտման բնույթը և վիրավորանքի՝ որպես անձանց նսեմացման հանգեցնող իրավախախտման էությունը,
- վեր հանել զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող՝ պատվի, արժանապատվության և գործարար համբավի

դեմ ուղղված իրավախախտումների առանձնահատկությունները և առաջարկել դրանցից պաշտպանվելու միջոցներ,

- պարզել համացանցի միջոցով կատարվող վիրավորանքի և զրպարտության առանձնահատկությունները և առաջարկել պաշտպանության միջոցներ, որոնք հարմարեցված կլինեն հենց համացանցի բնորոշ գծերին,
- հետազոտել ոչ նյութական վնասի հատուցման վիճելի հարցերը, հարաբերակցել այն բարոյական վնասի հետ
- մշակել ոլորտին առնչվող խնդրահարույց հարցերին վերաբերող հակասական մոտեցումների մասին սեփական դիրքորոշում և ձևակերպել համապատասխան օրենսդրական առաջարկներ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Հետազոտության իրավագիտական տեսական հիմքն են կազմել Վ.Դ. Ավետիսյանի, Տ.Կ. Բարսեղյանի, Գ.Հ. Բեքմեզյանի, Ա.Վ. Բելյավսկիի և Ն.Ա. Պրիդվորովի, Ռ. Բրաունի, Գ.Ն. Բորզենկովի, Ե.Վ. Գավրիլովի, Ս.Ս. Դիկմանի, Ա.Մ. Էրդելևսկու, Օ.Ս. Իոֆեի, Լ.Ա. Կրասավչիկովայի, Ն.Ս. Մալեինի, Մ.Ն. Մալեինայի, Դ. Միլոյի, Ռ. Յորգենսենի, Ֆ. Շաուերի, Մ. Ջասփերի, Բ. Ռոսլերի, Օ.Ա. Պեշկովայի, Վ. Պլոտնիկովի, Ս.Վ. Պոտապենկոյի, Ա.Պ. Սերգևի և Յու.Կ. Տոլստոյի, Մ. Սվենինգսոնի, Ե.Ա. Սուխանովի, Դ. Սոլովեի, Ս.Վ. Քեչեքյանի, Ե.Ա. Ֆլեյշիցի և այլոց աշխատությունները:

Իսկ փիլիսոփայական, հոգեբանական, լեզվաբանական, աստվածաբանական, պատմական, ինչպես նաև զանգվածային լրատվությանն առնչվող տեսական հիմքն են հանդիսացել Արիստոտելի, Պլատոնի, Ժ. Բոդրիարի, Մ.Վ. Գորբանևսկու և Ա.Կ. Սիմոնովի, Վ.Ի. Դալի, Բ.Ի. Դոդոնովի, Ի. Էկշտեյնի, Ու. Լիպմանի, Ն. Լումանի, Ի. Կանտի, Ս. Հարությունյանի, Դ. Միրանդոլայի, Է. Ֆրոմի, Ֆ. Ֆուկույամայի և այլոց աշխատություններ:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են հայաստանյան և արտասահմանյան պետությունների օրենքները, միջազգային-իրավական փաստաթղթերը, ներկա և նախկին հայրենական օրենսդրությունը, իսկ փորձառական հիմքը՝ հայրենական և օտարերկրյա դատարանների, մասնավորապես ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ավստրալիայի, Հարավաֆրիկյան Հանրապետության և այլ երկրների դատական, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Արդարադատության եվրոպական դատարանի ակտերը:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի,

իրավահամեմատական, քերականական, տրամաբանական վերլուծության, համակարգակառուցվածքային և այլ մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության գիտական նորույթն արտահայտվում է նրանում, որ անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը թեմայով 2010 թվականի մայիսի 18-ի կատարած օրենսդրական արմատական փոփոխություններից հետո համապարփակ և խորը հետազոտություն չի իրականացվել: Սույն աշխատությամբ ուսումնասիրվել է թեմայի վերաբերյալ հարցերի լայն շրջանակ՝ քննարկելով զրպարտությունն ու վիրավորանքը՝ որպես քաղաքացիական իրավախախտումներ, դրանց կատարումը զանգվածային լրատվամիջոցներում և համացանցում, ոչ նյութական վնասի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կագավորման հիմնախնդիրները, այս առնչությամբ հայցային վաղեմության կիրառման խնդիրները, կողմերի միջև ապացուցման բեռի բաշխումը, ինչպես նաև տրվել են քաղաքացիաիրավական իմաստով արժանապատվության և պատվի նոր սահմանումներ: Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և եզրակացության մեջ ամփոփված մտահանգումներում և առաջարկներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները՝

1. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ ՀՀ քաղ. օր.) 1087.1 հոդվածը սահմանում է անձի պատվի և գործարար համբավի պաշտպանության միասնական կարգ և ելնելով դրանց բովանդակության մասնակի նմանությունից՝ միաժամանակ փորձելով հարթել գործարար համբավ կրող սուբյեկտների շուրջ առկա բազմաթիվ վեճերը՝ գտնում ենք, որ ճիշտ կլիներ «գործարար համբավ» և «պատիվ» հասկացությունները ՀՀ քաղ. օր.-ի 19-րդ, 162.1-րդ և 1087.1-րդ հոդվածներում նախատեսել մեկ միասնական՝ «հեղինակություն» հասկացությամբ: Հակառակ պարագայում պետք է ընդունել այն հանգամանքը, որ գործարար համբավ կարող է ունենալ քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտ, ով գործունեության որոշակի բնագավառում ունի հեղինակություն՝ կախվածության մեջ չդնելով այն տվյալ պահին այդպիսի գործունեությամբ զբաղվելու հանգամանքից:

2. Քննարկելով զրպարտության՝ որպես քաղաքացիական իրավախախտման բնույթն ու հատկանիշները, պետք է ընդգծել, որ իրավական պաշտպանության շրջանակներից դուրս են մնացել իրականությանը չհամապատասխանող արատավորող տեղեկությունների տարածման այն դեպքերը, երբ տեղի է ունենում առանց իրավախախտի մեղքի այդպիսի փաստացի տվյալների տարածում: Ճիշտ է՝ նշված

դեպքերում տեղեկություններ տարածողը մեղք չի ունեցել, սակայն իր արարքի հետևանքով անձի հեղինակությանը վնաս է հասցվել: Բացի այդ ՀՀ քաղ.օր.-ի 1087.1 հոդվածը զետեղված է վերջինիս 60-րդ գլխում, որի վերտառությունն է «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորություններ»-ը: Իսկ ըստ ՀՀ քաղ. օր.-ի 1058-րդ հոդվածի վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Այստեղից հետևում է, որ զրպարտության համար պատասխանատվությունն էլ պետք է վրա հասնի իրավախախտի մեղքի առկայության դեպքում: Ուստի եթե զրպարտություն համարվող արարքը կատարվել է զրպարտողի մեղքի բացակայությամբ, ապա նա չի կարող ենթարկվել պատասխանատվության: *Նման դեպքերում արդարացի չի լինի արատավորող տեղեկություն տարածողին պատասխանատվության ենթարկելը: Սակայն նույնքան արդարացի չէ նաև զրպարտված անձին առանց որևէ իրավական պաշտպանության հնարավորության թողնելը:* Հետևաբար առաջարկում ենք Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 8-րդ մասը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Եթե իրականությանը չհամապատասխանող արատավորող տեղեկությունները հրապարակայնորեն ներկայացվել են առանց դրանք ներկայացնողի մեղքի, ապա անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ 1/ իր մասին տարածված արատավորող փաստացի տվյալների հերքում, 2/ դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակում»:

3. ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված չէ իրավախախտման այնպիսի տեսակ, երբ տարածվում են իրականությանը չհամապատասխանող, սակայն իրենց բնույթով արատավորող չհանդիսացող տեղեկություններ, որի արդյունքում անձը վնաս է կրում: Անհրաժեշտ է լրացնել նշված բացը, որպիսի նպատակով առաջարկում ենք ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածը լրացնել ևս մեկ իրավադրույթով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եթե անձի մասին տարածվել են իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ, որոնք իրենց բնույթով արատավորող չեն, ապա այդ անձն իրավունք ունի դատական կարգով պահաջնել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ 1/ իր մասին տարածված փաստացի տվյալների հերքում կամ դրանց վերաբերյալ իր պատասխանի հրապարակում, 2/ իրեն պատճառված վնասի փոխհատուցում»:

4. Հետազոտելով ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածի 2-րդ մասով նախատեսված վիրավորանքից բացառություն հանդիսացող

կարգավորումը «բնական արատներ»-ի հետ կապված՝ հանգել ենք այն եզրակացության, որ վերջինս անարդարացիորեն սահմանափակում է ձեռքբերովի արատներ և հոգեկան շեղումներ ունեցող անձանց կողմից վիրավորանքից պաշտպանվելու հնարավորությունները: Կարծում ենք, որ «բնական արատ» արտահայտության փոխարեն առավել նպատակահարմար կլիներ կիրառելու մի այնպիսի հասկացություն, որն իրենում կներառեր անձի առողջության վիճակի ինչպես բնածին, այնպես էլ ձեռքբերովի շեղումները, ինչպես բուժելի, այնպես էլ անբուժելի խաթարումները, և որոնք կվերաբերեին անձի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջությանը: Առաջնորդվելով հետագայում իրավակիրառողների շրջանում «արատ» եզրի մեկնաբանման կապակցությամբ տարընկալումներ չառաջանալու միտումով՝ առաջարկում ենք «ֆիզիկական և հոգեկան շեղումներ» հասկացությունը:

5. Իրականացնելով զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողների կողմից զրպարտություն, վիրավորանք կամ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների տարածում կատարելու դեպքերը՝ եկել ենք հետևյալ եզրահանգման. *1087.1 հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգավորումը, համաձայն որի սկզբնաղբյուրին հղում կատարելու դեպքում լրատվական գործունեություն իրականացնող կամ այլ անձը ազատվում է պատասխանատվությունից, չի համապատասխանում նույն հոդվածի 9-րդ մասին, որի համաձայն տեղեկատվության աղբյուրին հղում կատարած լրատվական գործունեություն իրականացնող կամ այլ անձը ազատվում է միայն փոխհատուցման պարտավորությունից: Առավել հիմնավոր ենք համարում, որ անձն ազատվեր պատասխանատվությունից, այդ թվում՝ հերքումը կամ պատասխանը իր լրատվության միջոցում հրապարակելու պարտականությունից, վիրավորանքի դեպքում ներողություն խնդրելու պարտականությունից, ինչպես նաև գույքային վնասի հատուցման պարտավորությունից, քանի որ թվարկված բոլոր դեպքերում նա չի հանդիսացել վիրավորանք և զրպարտություն կատարած սուբյեկտ, հետևաբար չպետք է ենթարկվի նման պատասխանատվության ձևերի: Ելնելով վերորգրյալից՝ անհրաժեշտ է 1087.1 հոդվածի 9-րդ մասում «փոխհատուցման պարտավորություն» արտահայտությունը փոխարինել «պասպահանատվություն» հասկացությամբ: Հետևաբար, նպատակահարմար ենք գտնում նաև ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի միավորումը դրա 6-րդ մասում՝ հաշվի առնելով տվյալ երկու իրավադրույթների տրամաբանական շաղկապվածությունը:*

6. Ուսումնասիրելով վիրավորանքի, զրպարտության և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների տարածման

առանձնահատկությունների ուսումնասիրությունն այն անձանց կողմից, որոնք հանդիսացել են սկզբնաղբյուրին հղում կատարող կամ այլ անձանց կողմից արտահայտվելու համար հարթակ տրամադրողներ՝ առաջարկում ենք օրենսդրական մակարդակով, մասնավորպես, ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածի 6.1 մասով նախատեսել դրույթ, որի համաձայն՝ *«երբ անձը հղում է կատարել տեղեկատվության աղբյուրին կամ հանդիսացել է հարթակ այլ անձանց կողմից տեղեկություններ տարածելու կամ արտահայտություններ կատարելու համար, ապա այն պարագայում, երբ սկզբնական հրապարակողը դատական կամ արտադատական կարգով հերքել է տեղեկատվությունը կամ հրապարակել է իր պատասխանը կամ հայցել է ներողություն կամ էլ առկա է դատարանի վճիռ՝ նախորդ հրապարակողի կողմից զրպարտություն, վիրավորանք կամ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների տարածում կատարելու մասին, ապա անձը համապատասխան ապացույցների ներակայացման դեպքում կրում է համապատասխանաբար սկզբնաղբյուր հանդիսացող անձի կողմից կատարված հերքումը, պատասխանը կամ ներողության տեքստը սկզբնաղբյուրի անունից արտատպելու կամ վիրավորանքի դեպքում դատարանի վճիռը հրապարակելու կամ սկզբնաղբյուրով իր հրապարակած տեղեկատվությունը հերքված կամ արտահայտության վերաբերյալ ներողություն հայցված լինելու մասին տեղեկություն հրապարակելու, կամ տեղեկությունների զրպարտություն հանդիսանալու հանգամանքը հաստատվելու մասին տեղեկություն հաղորդելու պարտականություն, իսկ հարթակ հանդիսանալու դեպքում սկզբնական տարածողի կամ վիրավորողի համար հերքման, պատասխանի կամ ներողության հրապարակում իրականացնելու հնարավորության ապահովման պարտականություն»: Հակառակ դեպքում տուժողը պետք է իրավունք ունենա դիմել նրա դեմ դատարան՝ հայցելով օրենքով նախատեսված պաշտպանության միջոցները, քանի որ վերջինիս մոտ փաստորեն արդեն առկա է լինում մեղք, որն արտահայտվում է զրպարտությունը կամ վիրավորանքը գիտակցաբար տարածել շարունակելու մեջ:*

7. Հաշվի առնելով համացանցի առանձնահատկությունները՝ առաջարկում ենք համացանցում վիրավորանք և զրպարտություն (ինչպես նաև իրականությանը չհամապատասխանող տեղեկությունների հրապարակում) կատարելու դեպքերի համար սահմանել առանձնահատուկ պաշտպանության միջոց՝ համապատասխան էլեկտրոնային տիրույթից հեռացումը: Այսպես, *եթե համացանցը համեմատելու լինենք տպագիր մամուլի հետ, ապա այն երբեք չինացող, միշտ թարմացվող լրատվության աղբյուր է, որը հրապարակվում է*

անընդհատ ռեժիմով, և որի բոլոր՝ անգամ տարիների վաղեմություն ունեցող էջերը գրեթե միշտ հասանելի են այնպես, ինչպես դրա ամենավերջին հրապարակումները: Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածը լրացնել 8.1 մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«*1) Եթե էլեկտրոնային կայքի տիրույթում կատարվել է ակնհայտ վիրավորանք, ապա էլեկտրոնային կայքի համար պատասխանատու անձը պարտավոր է 24 ժամվա ընթացքում դրանք հեռացնել էլեկտրոնային կայքի տիրույթից՝ անկախ այն հանգամանքից, դիմել է տուժողը կայքի իրավատիրոջը նման պահանջով, թե ոչ:*

2) Եթե էլեկտրոնային կայքի տիրույթում այլ անձանց կողմից՝ իրենց ինքնությունը թաքցնելով, կատարվել է վիրավորանք կամ զրպարտություն կամ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալների տարածում, ապա էլեկտրոնային կայքի իրավատերը պարտավոր է հեռացնել վիրավորական արտահայտությունները, զրպարտչական տեղեկատվությունը կամ իրականությանը չհամապատասխանող արատավորող բնույթ չունեցող տեղեկությունները տուժող անձի պահանջով»:

8. Վեր հանելով զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով հայցային վաղեմության առանձնահատկությունները՝ գտնում ենք, որ երկու տարբեր ժամկետների նախատեսումը՝ մեկամսյա և վեցամսյա, արդարացված չէ: Տվյալ պնդման համար հիմք է հանդիսանում թիվ ԼԴ/0749/02/10 և թիվ ԵԿԴ/3124/02/11 քաղաքացիական գործերով ՀՀ Վճռաբեկ դարատանի իրավական փաստարկների համադրումը: Եթե նշված առաջին որոշմամբ դատարանն արձանագրել է, որ մեկամսյա և վեցամսյա ժամկետներն իրենց բնույթով համապատասխանում են հայցային վաղեմության ժամկետին, ապա երկրորդով հանգել է այն եզրահանգման, որ վեցամսյա ժամկետի բացթողնման դեպքում այն վերականգնման ենթակա չէ: Այսպիսով, հիմնավոր է փաստել, որ վեցամսյա ժամկետի կարգավիճակը անորոշ է. արդյո՞ք հայցային վաղեմության կարևորագույն կանոնների կիրառության բացակայության պայմաններում այն կարող է համարվել հայցային վաղեմության ժամկետ, թե՞ դա դատարան դիմելու կամ մեկ այլ ժամկետ է: Հետևաբար ստացվում է, որ եթե մեկամսյա ժամկետը կասեցվել կամ ընդհատվել է, և միաժամանակ վեցամսյա ժամկետը լրացել, ապա դատական կարգով պաշտպանությունը հնարավոր չի լինի: *Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածից անհրաժեշտ է հանել մեկամսյա հայցային վաղեմության ժամկետին վերաբերող կարգավորումը՝ հայցային վաղեմության ժամկետ սահմանելով վեց ամիսը:*

9. Ուսումնասիրելով զրպարտության դեպքում կիրառվող պաշտպանության միջոցների տեսակները՝ եկել ենք այն եզրահանգման, որ ներկայում հերքումը կարող է իրականացվել միայն զանգվածային լրատվության միջոցով արատավորող տեղեկությունների տարածման դեպքում: Իսկ մնացած այն դեպքերում, երբ զրպարտությունը կատարվում է զանգվածային լրատվական գործունեություն չիրականացնող անձի կողմից, պաշտպանության միջոց հանդիսացող հերքումը կիրառելի չէ: Գտնում ենք՝ նշված մոտեցմամբ սահմանափակվում են զրպարտությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության հնարավորությունները: *Ուստի առաջարկում ենք զրպարտության դեպքում կիրառվող պաշտպանության միջոցների շրջանակ ընդգրկել հերքումը և պատասխանի հրապարակումը նաև այն դեպքերի համար, երբ անձի մասին իրականությանը չհամապատասխանող արատավորող փաստացի տվյալների տարածումն իրականացվել է զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող անձ չհանդիսացող սուբյեկտների կողմից:*

10. Հետազոտելով ոչ նյութական վնասի փոխհատուցման՝ որպես զրպարտության և վիրավորանքի դեպքում պաշտպանության միջոցի հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը, պետք է արձանագրել, որ մեկնաբանելով ՀՀ քաղ. օր.-ի 162.1-րդ հոդվածը՝ հետևում է, որ ոչ նյութական վնասը տառապանք է՝ ֆիզիկական կամ հոգեկան: Եթե ելնենք նշված սահմանումից, ապա ստացվում է, որ պետք է ընդունենք կամ այն փաստը, որ իրավաբանական անձինք կարող են տառապել, կամ էլ այն փաստը, որ ոչ նյութական վնասի փոխհատուցում իրավաբանական անձինք պահանջել չեն կարող: Տրամաբանական է ենթադրել, որ 162.1-րդ հոդվածում ոչ նյութական վնասը նույնացվում է բարոյական վնասի հետ: Բացի այդ անկախ նրանից, թե ինչպես է կոչում ֆիզիկական կամ հոգեկան տառապանք հանդիսացող վնասն օրենսդիրը՝ «բարոյական վնաս», թե՞ «ոչ նյութական վնաս», միայն այն հանգամանքը, որ այդպիսի վնասը հանգում է տառապանքի, մեր կարծիքով դրանով այն արդեն իսկ հակասության մեջ է մտնում իրավաբանական անձի էության հետ: Ուստի «ոչ նյութական վնաս»-ն այն իմաստով, որով սահմանված է 162.1-ին հոդվածի 1-ին մասով, իրավական կարգավորման ոլորտից դուրս է թողնում հեղինակությանը պատճառված վնասը: *Հետևաբար առաջարկում ենք որպես վնասի առանձին տեսակ սահմանել անձի հեղինակությանը պատճառված վնասը, որը փաստորեն ներկայիս պայմաններում բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքից, ինչի արդյունքում իրավաբանական անձի կողմից ոչ նյութական վնաս պահանջելու իրավունքը գործնականում դառնում է անիրագործելի:*

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը դրա գիտական նորույթի մեջ է: Իսկ աշխատության գործնական նշանակությունը պրակտիկայում առաջացող խնդիրների հաղթահարման և ՀՀ օրենսդրության կատարելագարծման մեջ է:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հեղինակը մասնակցել է ոլորտի առնչությամբ գիտաժողովների, դատական նիստերի: Նաև հանդես է եկել գիտական ելույթներով, որոնք հրատարակվել են տարբեր գիտական ամսագրերում: Միջբուհական գիտաժողովի ընթացքում իր ելույթի համար հեղինակն արժանացել է մրցանակի:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 8 պարագրաֆներից, 1 ենթապարագրաֆից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության համառոտ բովանդակությունը

Առաջաբանում ներկայացվել է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը, առարկան, պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլուխը՝ բաղկացած երեք պարագրաֆներից, վերաբերում է **«պատվի, արժանապատվության և գործարար համբավի առանձնահատկություններին և դրանք կրող սուբյեկտներին»**:

«Պատվի և արժանապատվության էությունը և դրանց՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտների առանձնահատկությունները» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել են պատիվը և արժանապատվությունը՝ որպես արժեքներ, իրավական կատեգորիաներ, ոչ նյութական բարիքներ և ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածով նախատեսված առանձնահատուկ օբյեկտներ, տրվել են դրանց նոր սահմանումներ:

«Գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի առանձնահատկությունները» վերնագիրը կրող 1.2 պարագրաֆում ուսումնասիրվել է գործարար համբավի բովանդակությունը և հստակեցվել դրա հարաբերակցությունը պատիվ, բարի անուն հասկացությունների հետ:

«Պատիվ, արժանապատվություն և գործարար համբավ կրող սուբյեկտները» վերտառությամբ 1.3 պարագրաֆում ուսումնասիրվել է

պատիվ, արժանապատվությունը և գործարար համբավ կրող սուբյեկտների շրջանակը՝ վեր հանելով տարբեր կատեգորիայի սուբյեկտների կապակցությամբ հիշյալ ոչ նյութական բարիքների առկայության վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա հակադիր մոտեցումները:

«Պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման կապակցությամբ առաջացող հարաբերությունների իրավական կարգավորումը» վերտառությունը կրող 2-րդ գլուխը բաղակացած է 3 պարագրաֆներից: **«Զրպարտությունը՝ որպես քաղաքացիական իրավախախտում»** վերտառութամբ 2.1 պարագրաֆում կատարվել է արատավորող տեղեկությունների տարածման հետ կապված հարաբերությունների հանգամանալից վերլուծություն:

«Վիրավորանքը՝ որպես քաղաքացիական իրավախախտում» վերնագրով 2.2 պարագրաֆում հետազոտվել է ինչպես քաղաքացիաիրավական իմաստով վիրավորանքի, այնպես էլ վիրավորանքից բացառություն կազմող արարքների բովանդակությունը:

«Անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի արատավորումն ու նսեմացումը զանգվածային լրատվության միջոցներով և համացանցով» վերտառությամբ 2.3 պարագրաֆում ուսումնասիրվել են անձի արատավորման և նսեմացման հետ կապված իրավահարաբերությունների առանձնահատկությունները համացանցային տիրույթում, ինչպես նաև զանգվածային լրատվական գործունեություն իրականացնող անձանց կողմից «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համատեքստում: Հիմնավորվել է, որ գործող օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցների շրջանակը բավարար չէ զրպարտությունից և վիրավորանքից արդյունավետ պաշտպանվելու համար և առաջարկվել է, մեր կարծիքով, համարժեք պաշտպանության միջոցների նախատեսում:

«Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության միջոցների բնութագիրն ու դատական կարգի առանձնահատկությունները վերտառությունը» կրող 3-րդ գլուխը բաղկացած է 2 պարագրաֆից և 1 ենթապարագրաֆից: **«Պատվի, արժանապատվության և գործարար համբավի դատական կարգի առանձնահատկությունները»** վերնագրով 3.1 պարագրաֆում մեր կողմից կատարվել է զրպարտության և վիրավորանքի վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների ապացուցման պարտականության բաշխման, հայցային վաղեմության ժամկետի հաշվարկման հանգամանալից ուսումնասիրություն:

«Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության միջոցների բնութագիրը» վերտառությամբ 2.3 պարագրաֆում ուսումնասիրվել են ՀՀ քաղ. օր.-ով նախատեսված հերքման, պատասխանի իրականացման կարգը դատական և արտադատական կարգով, ինչպես նաև վիրավորանքի դեպքում նախատեսված ներողության հայցման և դատարանի վճռի հրապարակման առանձնահատկությունները: Այս պարագրաֆի 3.2.1. ենթապարագրաֆում ուսումնասիրության կենտրոնում է **«ոչ նյութական վնասի փոխհատուցումը՝ որպես պաշտպանության միջոց վիրավորանքի և զրպարտության դեպքում»**, որի շրջանակներում ուսումնասիրվել է նաև բարոյական վնասի էությունը:

Եզրակացությունում առաջ են քաշվել հետևյալ մտահանգումները.

1) Մեր կողմից արժանապատվությունը սահմանվել է որպես իր կողմից սեփական անձի արժևորման, իսկ պատիվը՝ իր մասին հասարակական կարծիքի գիտակցում:

2) Առաջարկում ենք լրացնել ՀՀ քաղ. օր.-ը նոր նորմով, համաձայն որի շահագրգիռ անձինք հնարավորություն կստանան պաշտպանել անձի գործարար համբավի իրավունքը նրա մահից հետո:

3) Առաջարկում ենք օրենսդրական մակարդակով նախատեսել իրավաբանական անձանց՝ իրենց իրավանախորդի գործարար համբավը պաշտպանելու հնարավորություն:

4) Պետական մարմիններին չի կարող ընձեռվել իրենց գործարար համբավի իրավունքի պաշտպանության իրավունք, իսկ պետական պաշտոնատար անձինք պետք է ցուցաբերեն առավելագույն զսպվածություն՝ կապված իրենց գործարար համբավի իրավունքի պաշտպանությունն իրականացնելու հետ:

5) Անձանց անորոշ թվի նսմեացումը չի կարող ենթադրել այդ անձանց պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության իրավունքի իրականացման հնարավորություն:

6) Իրավաբանական անձինք հանդիսանում են միայն գործարար համբավի կրողներ:

7) Զրպարտությունը չի կարող դիտարկվել միայն իրավախախտ անձի դիտավորության համատեքստում, և այն բոլոր դեպքերը, երբ իրավախախտը արատավորող և իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները տարածել է անզգուշությամբ, ևս պետք է դիտարկվեն որպես զրպարտություն:

8) Անձը կարող է պաշտպանել իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը ոչ միայն այն դեպքում, երբ տարածվել են փաստացի

տվյալներ, այլև այն դեպքում, երբ տարածվել են գնահատողական դատողություններ, եթե դրանք զուրկ են որևէ հիմքից կամ ունեն հիմք, որը, սակայն, սխալ է գնահատվել:

9) Ներկայում տեղեկատվության հրապարակային ներկայացում կհամարվի ոչ թե պարզապես դրա ներկայացումը որևէ երրորդ անձի, այլ ներկայացումը երրորդ անձի ներկայությամբ:

10) ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը, համաձայն որի փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում զրպարտություն, եթե դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում, չպետք է վերաբերի այն դեպքին, երբ արատավորող բնույթի և իրականությանը չհամապատասխանող տվյալներ են հայտնվում երրորդ անձի մասին:

11) ՀՀ օրենսդրի կողմից ըստ էության կատարվել է խոսքի ազատության ու հեղինակության իրավունքի միջև հավասարակշռմանն ուղղված կարգավորումների նախատեսում: Մասնավորպես մի կողմից որդեգրվել է անգլոամերիկյան մոտեցումը 1087.1 հոդվածի 4-րդ մասում, սակայն պետք է նկատի առնվեր, որ ամերիկյան իրավունքում դիֆամացիայի կապակցությամբ հարաբերություններում ապացուցման պարտականության փոխանցումը կատարվում է հայցվորի՝ հանրային սուբյեկտ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված, իսկ անգլիական իրավունքը տվյալ հարցում ապացուցման պարտականության փոխանցմամբ որդեգրել է պատասխանողի առաջարկը չընդունած հայցվորին «պատժելու» սկզբունքը: Մյուս կողմից զգացվում է անգլիական իրավունքի ազդեցությունը օրենսգրքի 1087.1 հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետում, մինչդեռ անգլիական իրավունքում «ողջամիտ հրապարակում»-ը վերաբերում է միայն զանգվածային լրատվամիջոցներին: Կարծում ենք՝ ընդհանուր առմամբ օրենսդրի նշված մոտեցումը դրական քայլ է: Սակայն դրանով ըստ էության հայրենական օրենսդիրը ընդլայնել է խոսքի ազատության սահմանները, քանի որ «ողջամիտ հրապարակման» միջոցը սահմանել է նաև այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար՝ մեկ դրույթում ներառելով «ողջամիտ հրապարակման» և «ազնիվ մեկնաբանության» կառուցակարգերը, որպիսի հանգամանքը էապես սահմանափակում է զանգվածային լրատվություն չիրականացնողների իրավունքների իրականացման հնարավորությունները, քանի որ չհանդիսանալով տեղեկատվության արհեստավարժ մատակարարներ, որպիսին հանդիսանում են զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողները՝ այլ անձինք բավական դժվար կկարողանան կամ

գրեթե չեն կարողանա ապացուցել բոլոր այն պայմանները, որոնց ապացուցելու պահանջը մեծ դժվարությամբ են իրականացնում նույնիսկ զանգվածային լրատվական գործունեություն իրականացնողները:

12) ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված այն դեպքը, երբ հրապարակային արտահայտությունը հիմնված է ստույգ տվյալների վրա, բայց կատարված է անպարկեշտ ձևով, պետք է դիտել որպես վիրավորանք:

13) ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածի 2-րդ մասում ամրագրված «արատավորելու նպատակով» արտահայտությունը ոչ միայն չի ներդաշնակում գերակա հանրային շահով պայմանավորված՝ վիրավորանքից բացառության հետ, այլև դրանով փաստորեն տարանջատում է դիտավորության տեսակները ՀՀ քաղաքացիական իրավունքում:

14) ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «վիրավորանք» հասկացության մեջ անհրաժեշտ է լրացնել «նսմեցանել» բառը՝ հաշվի առնելով վիրավորանքի՝ առաջին հերթին անձի արժանապատվության դեմ ուղղվածությունը:

15) Վիրավորանք հնարավոր է կատարել նաև մեղքի անզգույշ ձևով:

16) Անձին վիրավորել հնարավոր է նաև առանց մեղքի: Խոսքն այն դեպքի մասին է, երբ առանց մեղքի վիրավորողը հրաժարվում է ներողություն խնդրել հասցված վիրավորանքի համար՝ դրանով իսկ փաստորեն դրսևորելով մեղք վիրավորանքի արդյունքում առաջացած հետևանքների վերացումից հրաժարման առումով:

17) Գտնում ենք, որ «տեղեկատվության աղբյուր» պետք է դիտել լրատվության միջոցը, հրապարակային ելույթը, պաշտոնական փաստաթուղթը և հեղինակային ստեղծագործությունը:

18) Կարծում ենք՝ ՀՀ քաղ. օր.-ի 1087.1 հոդվածից անհրաժեշտ է հանել «հեղինակ» բառը, որն իր բովանդակությամբ չի համապատասխանում ՀՀ քաղ. օր.-ի այլ հոդվածներում կիրառված «հեղինակ» հասկացությանը:

19) Գտնում ենք, որ ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 4-րդ մասը, ըստ որի զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը, անհրաժեշտ է խմբագրել այնպես, որ դրանից միանշանակ բխի, որ պատասխանողը կրում է իր կողմից ներկայացված փաստացի տվյալների՝ միայն իրականությանը համապատասխանությունն ապացուցելու պարտականությունը:

20) Ուսումնասիրելով ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը զրպարտության մասին՝ գտնում ենք, որ զրպարտության

վերաբերյալ գործերով պատասխանողի մեղքն ապացուցելու պարտականությունը չպետք է դրվի հայցվորի վրա, քանի որ գործնականում կիմաստազրկվի պատասխանողի կողմից տեղեկություն-ների ճշմարտացիության ապացուցման պարտականության իրականացումն այն պատճառով, որ մեղքի ապացուցումն արդեն իսկ ներառում է տեղեկությունների իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը:

21) ՀՀ քաղ. օր.-ի 1087.1-րդ հոդվածի 12-րդ մասը դատական ծախսերի մասով նպատակահարմար չէ նախատեսել ՀՀ քաղ. օր.-ով, քանի որ այդ հարցն արդեն իսկ կարգավորված է ՀՀ քաղ. դատավարության օրենսգրքով:

22) Գտնում ենք, որ վիրավորանքի վերաբերյալ գործերով պատասխանողը պետք է ապացուցի իր անմեղությունը, և ոչ հայցվորը՝ նրա մեղավորությունը:

23) Կարծում ենք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածի 3-րդ մասն այն մասով, որով հայցային վաղեմություն չի տարածում աշխատողների պատվի և արժանապատվության պաշտպանության վրա, անհամապատասխանություն և անհավասար մոտեցում է ստեղծում աշխատող և չաշխատող անձանց պատվի և արժանապատվության (գործարար համբավի) պաշտպանության հարցում:

24) Գտնում ենք, որ պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանության վերաբերյալ գործերով հայցային վաղեմության ժամկետի պահպանված լինելու ապացուցման բեռը պետք է կրի պատասխանողը:

25) Այն դեպքում, երբ միևնույն անձը հրապարակում է արատավորող և իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն անձի մասին մի քանի անգամ տարբեր ժամանակահատվածներում, սակայն տեղեկատվության բովանդակությունը բոլոր դեպքերում ըստ էության նույնն է, ապա անհրաժեշտ է տուժողին իրավունք տալ՝ իր ընտրությամբ որոշելու՝ կոնկրետ որ հրապարակման կապակցությամբ հայց ներկա-յացնել դատարան:

26) Անհրաժեշտ է ՀՀ քաղ. օր.-ի 19-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հրապարակայնորեն արտահայտված» կապակցությունը, քանի որ այն կրկնում է վիրավորանքի, զրպարտության հրապարակայնության հատկանիշը:

27) Անհրաժեշտ է կատարել համապատասխանեցում «Վարչարա-րության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում և ՀՀ քաղ. օր.-ում կիրառվող գույքային բովանդակություն չունեցող վնասի անվանումների միջև:

Ատենախոսության դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1) Չիֆլիկյան Ա., «Պատվի, արժանապատվության և գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտների առանձնահատկությունները», // «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատ., Երևան, 2014թ., էջեր 127-140:

2) Չիֆլիկյան Ա., «Համացանցի միջոցով անձի պատվի, արժանապատվության և գործարար համբավի նսեմացման կապակցությամբ ծագող հարաբերությունների իրավական կարգավորումը», // «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2015 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատ., Երևան, 2015թ., էջեր 218-231:

3) Չիֆլիկյան Ա., «Արատավորող տեղեկությունների տարածում, թե՞ փաստացի տվյալների հրապարակային ներկայացում. համեմատական-իրավական վերլուծություն», // «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թվականի նստաշրջանի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատ., Երևան, 2016թ., էջեր 172-182:

4) Չիֆլիկյան Ա., «Զրպարտությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի», // «Օրինականություն», ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, N 100, Եր., 2017թ., էջեր 43-49:

5) Չիֆլիկյան Ա., «Գործարար համբավի՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտի առանձնահատկությունները», «Այլընտրանք» գիտական հանդես, N 2, Եր., 2017թ., էջեր 32-41:

6) Չիֆլիկյան Ա., «Արժանապատվության, պատվի և գործարար համբավի պաշտպանության դատական կարգի որոշ առանձնահատկությունների շուրջ», // «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, 5-6/215-216, Եր., 2017թ., էջեր 54-61:

Чифликян Арменуи Ервандовна

ГРАЖДАНСКО-ПРАВОВАЯ ЗАЩИТА ЧЕСТИ, ДОСТОИНСТВА И ДЕЛОВОЙ РЕПУТАЦИИ

Аннотация

Вне всякого сомнения в любом обществе достоинство, честь и деловая репутация лица нуждаются в должной защите. Такая защита преследует не только цель сохранения ненарушенности прав лица от соответствующих посягательств, но и с очевидностью способствует укреплению и совершенствованию правил этикета между членами общества. Говоря об общественной важности этих норм надо признать, что они ведут к становлению не только более вежливого, но и такого общества, которое основывается на правдивых фактах.

Категории «достоинство» и «репутация» всегда были для лица понятиями особой заботы. Человек с первых дней своего существования прилагал усердия для сохранения своей репутации незапятнанной даже ценой собственной жизни. Безусловно, каждый отдельный субъект гражданского права своеобразно толкует термин «доброе имя». Но тот факт, что почти все стремятся сохранить свое имя «добрым», не поддается сомнению.

В результате коренных поправок Гражданского кодекса Республики Армения, произошедших 2010 году, основная статья (1087.1 ГК РА), регулирующая порядок защиты достоинства, чести и деловой репутации, стала представлять собой уникальное сопоставление норм, которое в целом не имеет схожего себе и тем самым требует глобокого изучения.

Кроме того вышеуказанные поправки бросили новый вызов определению на законодательном уровне граней между правом на репутацию и свободой слова.

В данном диссертационном исследовании автор изучил достоинство и честь как ценности, правовые категории, нематериальные блага и

специальные предметы правового регулирования статьи 1087.1 гражданского кодекса Республики Армения. Автором были даны новые определения чести и достоинства как гражданско-правовых категорий.

Автором также изучены особенности деловой репутации и сделаны выводы касательно до сих пор не имеющего определенности в юридической литературе вопроса о праве субъекта на деловую репутацию.

В диссерационной работе досканально исследованы критерии клеветы и оскорбления как гражданских правонарушений. В своей работе автор также обратил особое внимание на оскорбление и клевету посредством интернета и средств массовой информации, в результате чего были предложены меры защиты соответствующие особенностям киберпространства и характеру средств массовой информации.

Автор также исследовал порядок как судебной, так и внесудебной защиты достоинства, чести и деловой репутации, подвергая сомнению оправданность некоторых правовых норм регулирующих отношения, возникающих в связи с исковой давностью касательно судебных дел по искам о защите достоинства и репутации.

В своем исследовании автор также проанализировал спорные вопросы о неимущественном вреде, моральном вреде, вследстие чего пришел к обоснованному выводу, что Гражданский кодекс Республики Армения нуждается в предусмотрении специального вида вреда нематериального характера.

Armenuhi Yervand Chiflikyan

CIVIL-LAW PROTECTION OF HONOR, DIGNITY AND BUSINESS REPUTATION

Summary

There is no doubt that dignity, honor and business reputation of an entity need proper protection in any society. Such protection aims not only to preserve the integrity of the rights of the entity from relevant infringements, but also obviously contributes to the strengthening and improvement of the rules of good manners between members of society. Speaking about the social importance of these norms, we must admit that they lead to the formation of not only a more polite society, but also of the one based on true facts.

The categories «dignity» and «reputation» have always been the subjects of special care for a person. From the first days of their existence, humans have made untold efforts to preserve their reputation undefiled, even at the cost of their own lives. Certainly each subject of civil discourse interprets the term «good name» in his/her own way. But the fact that almost everyone wants to keep their name good is beyond any doubt.

There were fundamental amendments in the Civil code of the Republic of Armenia that took place in 2010. As a result, the main article (1087.1 of the Civil code) regulating the protection of dignity, honor and business reputation, has become a unique comparison of norms, which, as a whole, is unlike any other, and thus requires a deep study.

In addition, the above-mentioned amendments have posed a new challenge to determination of the boundaries between the right to reputation and the freedom of expression at the legislative level.

In her dissertation, the author studied dignity and honor as values, legal categories, intangible assets and special subjects of legal regulation of article 1087.1 of the Civil code of the Republic of Armenia. New definitions of honor and dignity as civil-law categories have been given by the author.

The author also studied the features of business reputation and made

conclusions about the issue of subjects' right to business reputation, which still does not have enough elaboration in legal literature.

Dissertation thoroughly investigated the conditions of insult and slander as civil offences. In her work, the author also paid special attention to the insult and slander through the Internet and the media, which resulted in the proposed measures of protection corresponding to the characteristics of the cyberspace and the nature of the media.

The author also investigated the procedure of both judicial and non-judicial protection of dignity, honor and business reputation, questioning the validity of some legal norms regulating relations relating the statutes of limitations regarding court cases on claims for protection of dignity and reputation.

In addition, the author also analyzed the controversial issues of non-pecuniary damage, moral damage, in which she came to a reasonable conclusion that the Civil code of the Republic of Armenia needs to provide protection from a special type of non-material damage.